«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/10

ք. Երևան

«11» դեկտեմբերի 2017թ.

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությունը ,՝ ի դեմս տնօրեն Արթուր Խաչատուրյանի, որը գործում է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հելիքս Կոնսալտինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Արամ Մխիթարյանի (այսուհետ՝ Կատարող), (այսուհետ երկուսը միասին՝ Կողմեր, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ), կնքեցին Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրամադրվող էլեկտրոնային ստորագրությունների համար իրականացվող վճարների ընդունման և մոնիտորինգի էլեկտրոնային համակարգի լրամշակման ծառայությունների մատուցման գնման սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է մատուցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրամադրվող էլեկտրոնային ստորագրությունների համար իրականացվող վճարների ընդունման և մոնիտորինգի էլեկտրոնային համակարգի լրամշակման ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 տույժը :

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Մինչև ծրագրային փաթեթի և ծրագրային համակարգի ընդունումը, Կատարողը պարտավոր է Պատվիրատուին հանձնի Հավելված 3.2-ում նշված փաստաթղթերը և կատարի համապատասխան հրահանգները:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 1,961,856 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունը մատուցելիս Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրի 5.2 կետերով նախատեսված տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Ծառայությունը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մաս:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 3.2 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մաս, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ	«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ
ք. Երևան, Հանր. Հրապարակ	ք. Երևան, Ն. Ադոնցի 2,
Կառավարական տուն 1	2-րդ մուտք, 2-րդ հարկ
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 22041-0121291000	Հ/Հ 220000129423000
ՀՎՀՀ 02707093	ՀՎՀՀ 00031518
Տնօրեն _____ Ա. Խաչատուրյան	Տնօրեն _____ Ա. Մխիթարյան
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«11» «դեկտեմբեր» 2017թ. կնքված
N «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնման Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	72261100/1	Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրամադրվող էլեկտրոնային ստորագրությունների համար իրականացվող վճարների ընդունման և մոնիտորինգի էլեկտրոնային համակարգի լրամշակման ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագիրը ներկայացված է ստորև	դրամ	1,961,856		ք. Երևան, Տիգրան Մեծ 4, 5-րդ հարկ	Պայմանագրի կնքման օրվանից հաշված մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրամադրվող էլեկտրոնային ստորագրությունների համար իրականացվող վճարների ընդունման և մոնիտորինգի էլեկտրոնային համակարգի լրամշակման ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագիր

1. Ներածություն

Համաձայն ընդունված օրենքի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար գործում է էլեկտրոնային ստորագրությունը, որն իրենից ներկայացնում է էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

Էլեկտրոնային ստորագրությունների տրամադրման համար քաղաքացիներից գանձվում են որոշակի վճարներ, որոնց գանձման ու համապատասխան Ծառայության գործողությունն ավելի արագ, հեշտ և ժամանակին համընթաց դարձնելու, հնարավորինս ավտոմատացնելու, մարդկային գործոնը նվազագույնին հասցնելու, համապատասխանաբար նաև որակը բարձրացնելու և ներկայումս առկա բացթողումները վերացնելու

նպատակով ստեղծվել և ներդրվել է էլեկտրոնային ստորագրությունների համար իրականացվող վճարների ընդունման և մոնիտորինգի էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ Համակարգ):

2. Համակարգի կառուցվածքային նկարագրություն

Առկա համակարգի կառուցվածքային արտապատկերումը ունի հետևյալ տեսքը՝



3. Առկա համակարգի ծրագրային հենքի նկարագրություն

Ծրագրավորման լեզու՝ PHP7 (ՓիԷյջՓի7)

Տվյալների պահոց՝ MySQL (ՄայԷսՔյուԷլ) 5.7

Օպերացիոն համակարգ՝ CentOS7 (ՑենտՕԷս7)

4. Լրամշակման անհրաժեշտ աշխատանքների նկարագրություն

CoSign (ՔոՍայն) հաճախորդների տվյալների փոփոխում

CoSign Ծառայության հաճախորդների անձնական տվյալների խմբագրման հնարավորության ավելացում՝ բացառությամբ հանրային Ծառայության համարանիշի:

Հաճախորդների ցանկով մուտքագրում

Հարկավոր է մշակել հաճախորդների տվյալների ցանկով մուտքագրման և դրանց ակտիվացման գործիք մեկ վճարման բաշխման հնարավորության տրամադրմամբ: Համապատասխանաբար ըստ ցուցակի պետք է գեներացվեն հաշիվ-ապրանքագրեր:

Նոր Cosign (ՔոՍայն) հաճախորդների գրանցում

Համակարգում Cosign (ՔոՍայն) հաճախորդների գրանցման գործիքի մշակում:

Վճարումներում առկա սխալ ձևաչափի ՀԾՀ տվյալների մշակում

Վճարումների ներմուծման ենթահամակարգում հարկավոր է կատարել փոփոխություններ, ըստ որի ցանկալի է վճարման նպատակի դաշտում ստուգվի առկա 10 նիշը մեր բազայում գոյություն ունեցող հաճախորդ է, թե, ոչ, եթե այո անկախ ձևաչափից նստացնել վճարումը տվյալ ՀԾՀ-ի վրա:

Բաժանորդի շրջանառություն

Հարկավոր է մշակել նոր հաշվետվության տեսակ, որը պետք է հնարավորություն ընձեռի կատարել որոնում ոչ միայն նշված ՀԾՀ-ի, այլև համակարգի գործարկումից հետո ընկած ընտրված ժամանակահատվածում բոլոր ՀԾՀ-ների համար:

Սև ցուցակ

Մշակվող ենթահամակարգը պետք է հնարավորություն տա բլոկավորելու նշված էլ. ստորագրությունները: Նման դեպքում, նույնիսկ վճարում կատարելու պարագայում հաճախորդը չպետք է կարողանա ակտիվացնել իր էլ. ստորագրությունը:

Էլ. ստորագրության ակտիվացման էջում հրապարակային Պայմանագրի տեղադրում

Հարկավոր է www.ekeng.am կայքի անձնական էջում Ծառայությունը ակտիվացնելու ձևի լրացման մեջ ավելացնել նշավանդակի տեսքով «Ծանոթացել եմ հրապարակային Պայմանագրին» հղում հրապարակային պայմանագրի վրա: Հաճախորդին պետք է թույլ տրվի ակտիվացնելու Ծառայությունը, միայն վերոհիշյալ նշավանդակը նշելուց հետո:

Անձնական էջում հեռախոսահամարի փոփոխության հնարավորություն

www.ekeng.am կայքի անձնական էջում պետք է ավելանցել հեռախոսահամարը խմբագրելու դաշտ, որպեսզի հաճախորդները ինքնուրույն փոփոխեն իրենց հեռախոսահամարները:

CRL (ՍիԱրԷլ) հետկանչման կարգավիճակ

Համակարգի «CA (ՍիԷյ) կարգավիճակ» ենթաբաժնում հարկավոր է ցուցադրել համապատասխան CRL(ՍիԱրԷլ)-ի տվյալները:

SMS կարճ հաղորդագրությունների ուղարկման ընթացակարգի փոփոխություն

1. Ավտոմատ երկարաձգումներից հետո առավոտյան ժամը 10:00-ին համապատասխան հաճախորդներին հաղորդագրության ուղարկում:
2. Առաջին անգամ հաղորդագրություն ուղարկելուց հետո, եթե հաճախորդը վճարում է, նորից չուղարկել էլ. ստորագրության ժամկետի սպառման մասին հաղորդագրությունը:
3. Վճարային տերմինալների միջոցով վճարում կատարելու դեպքում հաճախորդին էլ. Ստորագրության ակտիվացման մասին հաղորդագրության ուղարկում:

Վճարումների ներբեռնման կրկնակի ստուգում

Վճարումներ ներբեռնելիս պետք է ավելացնել ստուգում, որպեսզի նույն փաստաթղթի համարով, նույն օրով և նույն մեկնաբանության դաշտով վճարումը համակարգը չթողնի ներբեռնել:

Հեռացնել համակարգի ադմինիստրատորների կողմից սխալմամբ կրկնակի մուտք արված վճարումները և դրանց հետ փոխկապակցված այլ տեղեկատվությունը:

Cosign Ծառայության ինքնաշխատ երկարաձգման դադարեցում

Հարկավոր է դադարեցնել CoSign Ծառայության տրամադրման ինքնաշխատ երկարաձգման գործառույթը:

Վճարահաշվարկային կազմակերպությունների տրամադրված API-ում փոփոխությունների կատարում

Վճարահաշվարկային կազմակերպությունների տրամադրված API-ում հարկավոր է կատարել լրամշակում վճարողի բջջային հեռախոսահամարը ընդունելու և պահպանելու համար: Տվյալ դաշտի փոխանցումը

հանդիսանում է ոչ պարտադիր պայման: Տվյալ հաճախորդի հիմնապաշարում այլ հեռախոսահամարի առկայության դեպքում այն թարմացվում է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ք. Երևան, Հանր. Հրապարակ
Կառավարական տուն 1
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 22041-0121291000
ՀՎՀՀ 02707093

Տնօրեն_____ Ա. Խաչատուրյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ
ք. Երևան, Ն. Ադոնցի 2,
2-րդ մուտք, 2-րդ հարկ
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220000129423000
ՀՎՀՀ 00031518

Տնօրեն _____ Ա. Մխիթարյան

Կ.Տ.

Հավելված N 2
«11» «դեկտեմբեր» 2017թ. կնքված
N «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնման Պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261100/1	Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրամադրվող էլեկտրոնային ստորագրությունների համար իրականացվող վճարների ընդունման և մոնիտորինգի էլեկտրոնային համակարգի լրամշակման ծառայություն	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	1,961,856	1,961,856

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ք. Երևան, Հանր. Հրապարակ
Կառավարական տուն 1
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 22041-0121291000
ՀՎՀՀ 02707093

Տնօրեն_____Ա. Խաչատուրյան
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ
ք. Երևան, Ն. Ադոնցի 2,
2-րդ մուտք, 2-րդ հարկ
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220000129423000
ՀՎՀՀ 00031518

Տնօրեն_____Ա. Միսիթարյան
Կ.Տ

Հավելված 3
«11» «դեկտեմբեր» 2017թ. կնքված
N «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնման Պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը

հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվա-նումը	տեխնի-կական բնութագրի համառոտ շարա-դրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանա-կացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանա-կացույցի	փաս-տացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանա-կացույցի	փաս-տացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Կատարող	Պատվիրատու
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
	Կ.Տ.

Հավելված 3.1
«11» «դեկտեմբեր» 2017թ. կնքված
N «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնման Պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը
գնման Պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 3.2
«11» «դեկտեմբեր» 2017թ. կնքված
N «ԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնման Պայմանագրի

Մինչև ծրագրային փաթեթի և ծրագրային համակարգի ընդունումը, Կատարողի կողմից Պատվիրատուին պարտադիր տրամադրվող փաստաթղթերի և տվյալների ցանկ

1. **Ստորև ներկայացված փաստաթղթերը Կատարողը պետք է Պատվիրատուին հանձնի լազերային սկավառակով.**

- ծրագրային համակարգի տեխ.պատվերը և տեխ.նկարագիրը,
- ծրագրային համակարգի բոլոր ծրագրային սկբզնական կոդերը
- ծրագրային համակարգի կառուցվածքային մասերի՝ բլոկերի միջև կապերը՝ բլոկ-սխեման,
- ծրագրային համակարգի կառուցվածքային մասերի՝ բլոկերի միջև փոխանակվող տվյալների կառուցվածքը,
- ծրագրավորման կիրառական ինտերֆեյսը և կառուցվածքը,
- այլ ծրագրային համակարգերի հետ կապերը, փոխադարձ ինտերֆեյսը, փոխանակվող տվյալները,
- ծրագրային համակարգի կառավարող՝ կոնֆիգուրացիոն ֆայլերի ցանկը և կառուցվածքը,
- համակարգի կառավարող և լրացվող աղյուսակները (բազաները) կառուցվածքը և լրացման սկզբունները, անհրաժեշտ ծրագրային միջոցների ցանկը և նկարագրությունը,
- լրացվող աղյուսակները (բազաները) լրացված (եթե առկա են),
- ծրագրի հաշվետվությունների (reports) ձևավորման սկզբունքները, նկարագրությունը,
- տեղեկություններ ծրագրային համակարգի հնարավոր սահմանափակումների մասին,
- համակարգչի (սերվերի) տեղեկատուի (directory) մեջ ծրագրային բլոկերի դասավորվածությունը (tree),
- բոլոր հնարավոր մուտքանունները և ծածկանունները (login, password),
- նոր օգտատեր ադմինիստրատոր, օգտվող և հաճախորդ (admin, user and client) ավելացնելիս քայլերի հերթականության նկարագրությունը, այդ թվում ադմինիստրատիվ քայլերը, համակարգի ադմինիստրատորի (admin) քայլերը:

1. **Ստորև ներկայացված փաստաթղթերը Կատարողը պետք է Պատվիրատուին հանձնի թղթային տարբերակով.**

- ծրագրավորողի կոնտակտային տվյալներ,
- համակարգից օգտվողների (clients) կոնտակտային տվյալներ (եթե այդպիսիք կան),
- կատարողի կողմից ծրագրային համակարգի և ծրագրերի հեղինակային իրավունքներից հրաժարում ի օգուտ Պատվիրատուի,
- ծրագրային համակարգի և ծրագրերի հեղինակային իրավունքներից հրաժարում Կատարողի ծրագրավորողների կողմից ի օգուտ պատվիրատուի,
- ծրագրավորողի ուղեցույց,
- ադմինիստրատորի (admin) ուղեցույց,

- օպերատորի ուղեցույց (եթե կա օպերատոր):

2. **Ստորև ներկայացված են այն հրահանգները, որոնք Կատարողը պետք է իրականացնի Պատվիրատուի գրասենյակում՝ հատուկ սահմանված վայրում**

- Ստացված ծրագրային կոդը արտագրվում է տեստային համակարգչի (սերվերի) վրա, և գործարկվում:
- Ստացված տեստային համակարգը պետք է աշխատի նույն կերպ, ինչ առկա իրական (production) համակարգը,
- Հաջորդ քայլով՝ փորձարկում իրական համակարգի վրա (նախորոք պահուստը (backup) ստեղծելուց հետո):
- Փորձարկման ժամանակաշրջանը՝ կախված է համակարգից օգտվողների աշխատանքի ինտենսիվությունից, և հնարավոր բոլոր տարբերակվող հարցումների փորձարկումից:

Փաստաթղթերը հանձնեց	Փաստաթղթերը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն